ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

«30» հունիսի 2016 թվականի N: 265-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ԿՆՔՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի N 462-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016 թվականի փետրվարի 11-ի N 25-Ն հրամանի N 1 հավելվածի 3.8-րդ կետով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016 թվականի մարտի 11-ի թիվ ԱԱ/ԱՄ-2-4/2066-16 գրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի տարածքային մակարդակում 2016 թվականի ապրիլի 27-ին կնքված սոցիալական համագործակցության համաձայնագրի համաձայն ձևավորված համակարգող խորհրդի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2009 թվականի դեկտեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի Մարալիկի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությանը կից սոցիալական աջակցության խորհրդի անհատական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2007 թվականի ապրիլի 27-ի թիվ 211 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 462-Ա որոշումը:

Հ. ՍԻՄՈՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզպետի 2016 թվականի
հունիսի 30-ի N265Ա որոշման

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ԿՆՔՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՐԴԻ

Հովհաննես Հովհաննիսյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի Մարալիկի սոցիալական աջակցության տարածքային գործակալության պետ.

Գոհար Ղազարյան - Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության Մարալիկի զբաղվածության տարածքային կենտրոնի գլխավոր մասնագետ.

Էդիկ Ուռուտյան - Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի Մարալիկի սոցիալական ապահովության տարածքային բաժնի գլխավոր մասնագետ.

Հայկ Մուրադյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի թիվ 2 բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովի փորձագետ վիրաբույժ.

Մերի Դարբինյան - Հաշմանդամություն ունեցող անձանց «Արմինե» կրթամշակութային հասարակական կազմակերպության Մարալիկի մասնաճյուղի անդամ.

Լուսինե Գրիգորյան - «Հանգրվան» պետական ոչ առևտրային կազմակերպության սոցիալական աշխատող.

Կիրով Հովհաննիսյան - «Հայաստանի Հանրապետության պատերազմի, զինված ուժերի, աշխատանքի և իրավապահ մարմինների վետերանների միավորում» հասարակական կազմակերպության Անիի մասնաճյուղի նախագահ.

Լևոն Պետրոսյան - «Հայաստանի Հանրապետության երկրապահ կամավորականների միության» Անիի տարածքային բաժանմունքի նախագահ.

Սաթենիկ Յուզբաշյան - Ֆիզիկական անձ/քաղաք Մարալիկ,Շիրակացի փողոց,տուն 1/:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
Իսկականի հետ ճիշտ է

Խ.ՊՈՂՈՍՅԱՆ